

Ա. ՄԵՆՍԿԱԿԱՆԵՅԵ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ 1941—1945 թ.թ.

1941—1945 թ. թ. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին սովետական զինվորական մամուլը համալրվեց ՍՍՌՄ ժողովուրդների լեզուներով հրատարակվող բազմաթիվ նոր թերթերով: Նրանց մեջ իրենց պատվավոր տեղն ունեն ուղղափառականների, բանականների և զիվիզիանների հայկական թերթերը:

Պատերազմի ընթացքում ուղղափառականներում և առանձին միավորումներում ստեղծվեցին հայերեն 16 թերթ, որոնք հրատարակվում էին սովետա-գերմանական ուղղափառական տարրեր հատվածներում: Այդ թերթերը հիմնվում էին Կարմիր Բանակի Գլխավոր քաղաքական վարչության պետի հրամաններով: Թերթերի խմբագրություններն ու տպարանները կոմպլեկտավորվում էին Հայաստանի Կ(Բ)Պ Կենտկոմի և համապատասխան քաղօրգանի կողմից: Հ(Բ)Պ Կենտկոմը զինվորական թերթերին տրամադրում էր անհրաժեշտ կադրեր, տպարաններ, ձեռնարկներ և ուղղություն էր տալիս նրանց գործունեության համար: Պատերազմի ժամանակ Հայաստանը ուղղափառական է ուղարկել 16 տպարան անհրաժեշտ քանակի տառերով, մեքենաներով և զբաղարական ու տպագրական կադրերով:

Հայկական զինվորական թերթերը ուղղափառականների և միավորումների հրամանատարության ձեռքին ծառայում էին որպես մի անփոխարինելի զենք՝ հայ մարտիկներին լուսավորելու, կազմակերպելու, դաստիարակելու և ազատագրական կռվի ոգեշնչելու մեր հայրենիքը ներխուժած գերմանական ֆաշիստների դեմ: Թերթերն իրենց էջերում լուսաբանում էին մեր հայրենիքի պաշտպանների անօրինակ մարտական սխրագործությունները: Այդ թերթերը հանդիսանում են մեր ուղղափառների հերոսությունների ճշմարտացի տարեգրություններ, որոնց էջերում գրի են առնված ժողովրդի աղնիվ պավակների մեծ, սնման գործերը:

Առաջին ուղղափառատային հայերեն թերթը ստեղծվեց Ղրիմի ուղղափառականներում, Կերչ քաղաքում 1942 թ. հունվարին: Դա Ղրիմի ուղղափառականների «Боевой Нарцк» թերթի (իսկ ավելի ուշ այն կոչվում էր «Боевая крымская») հայերեն հրատարակությունն էր, որ սկզբում կոչվում էր «Մարտական գրոն», իսկ ավելի ուշ՝ «Մարտակուց Ղրիմյան բերք»:

1942 թ. հունվարից Ղրիմի ուղղափառականների թուր հատվածներում մղվում էին պաշտպանողական մարտեր: Մարտական գրոն թերթը ասարածվելով ուղղափառականների թուր հատվածներում՝ Սեաստոպոլում, Թեոդոսիայի մատույցներում, Կերչի թերակղզում գտնվող թուր զիրթերում, հայ ազգամիկներին հասցնում էր Գերագույն Գլխավոր Հրամանատար մեծ Ստալինի հրամանները և մեր ժողովրդի պատվերն իր ուղղափառականներին: Թերթը

առաջին համարից սկսած նյութեր էր տպագրում այդ կոնֆլիկտներում արիության և խիզախության ցուցաբերած ռազմիկների մասին: Փետրվարի 11-ին «Մարտական գրոհ»-ը նյութեր է հրատարակել կերչի թերակղզին զեռանալին օպերացիայով գրավող այն հերոսների մասին, որոնք ՍՍՌԿ կառավարության կողմից պարզևատրված են բարձր շքանշաններով: Թերթը այդ օրերին ռազմիկներին սովորեցնում էր պաշտպանողական և հարձակողական մարտեր վարելու արվեստը, փոքր ստորաբաժանումներով հետախուզության գնալու, հակառակորդի գիրքերը գրոհելու տակտիկական գանազան պրիոնները: 1942 թվի մարտին, երբ զորամասերը պատրաստվում էին հարձակողական մարտերի, թերթի խմբագրությունը, բացի հիմնական հրատարակությունից, բաց թողեց նաև մի քանի թուղթիկներ, նամակ-կոչեր, լողունգներ, առանձին բրոշյուր, որոնցով մարտիկների մեջ բորբոքում էր ատելություն՝ դեպի գերմանական զավթիչները և սովետական ռազմիկներին նախապատրաստում էր վճռական հարձակողական կոնֆլիկտներ:

«Կարմիր Բանակի փառապանծ մարտիկներ, գերմանա-ֆաշիստական հորդաներին քշեցեք դեպի արևմուտք, ձախողեցեք սահմանագծում գերմանացիների ամբանալու փորձերը, ջախջախեցեք և ոչնչացրեք թշնամու կենդանի ուժն ու տեխնիկան» — մարտական լողունգով է թերթը դիմել հայ ռազմիկներին փետրվարի 5-ին անաշնորդող հողվածում:

Ուրագրության աշխատողները թերթը հրատարակում էին բացառիկ ղեկավարին պայմաններում: Նյութերը շարվում էին ձեռքով, սահմանափակ քանակով տառ ունեցող տպարանի պրիմիտիվ պայմաններում: Թերթի աշխատանքի պայմաններն ավելի ղեկավարացան, երբ այն հրատարակվում էր ռազմաճակատի առաջավոր զժի մոտ: Այդ շրջանում խմբագրությունը շարունակ ենթարկվում էր գերմանական ավիացիայի ուժերի թշնամուների վտանգին և թերթի նյութերի կազմակերպման, խմբագրման ու տպագրության ամբողջ աշխատանքը կատարվում էր մարտական իրադրության մեջ:

Այդ թերթի լավագույն էջերն են կազմում այն նյութերը, որոնց մեջ գրի են առնված ինչպես Սևաստոպոլի պաշտպանների մարտական գործերը, այնպես էլ գնդապետ Չաքյանի գլխավորած հայկական զորամասերի մղած հերոսական մարտերը գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի դեմ:

Կերչի թերակղզում մղվող կոնֆլիկտի ժամանակ հայ զինվորներին կազմակերպելու և լուսավորելու գործում 1942 թ. մարտ—մայիս ամիսներին կարևոր դեր խաղաց «Հայկական սնայսլեր» թերթը, որը տարածվում էր հայկական զորամասերի զինվորների մեջ: Այդ թերթի փոքրիկ էջերը հաճախ ամեն օր հրատարակվելով հասնում էին հայկական զորամասերը, ստորաբաժանումները, խրամատներում նստած, թե հետախուզության գնացած մարտիկներին, սանիտարական կետերը, տրանսպորտի դասակները: Թերթը իր առաջին համարում դիմում է ընթերցողներին.

«Կարմիր Բանակի հայ ռազմիկներ, հարվածեցեք և ոչնչացրեք հիտլերյան զավթիչներին: Նրանք ավերել և քայքայել են մեր քաղաքներն ու գյուղերը, ծաղր ու ծանակի են ենթարկել մեր ժողովրդին, մեր ծնողներին, կանանց ու երեխաներին: Անողորմ վրեժ լուծեցեք թշնամուց: Արյան դիմաց—արյուն, մահվան դիմաց—մահ»:

Թերթը հայ ռազմիկներին կազմակերպում և կովի էր կոչ անում ոչնչացնելու Ղրիմ ներխուժած ֆաշիստական զորքերին, որոնք իրենց գիշա-

ախ թաթը մեկնում էին դեպի հարազատ հովհասը: «Դրիմը եղել է և կլինի սովետական», — գրում է «Հայկական սննդային»-ը և մարտիկների մեջ դարգացնում հավատ դեպի մեր հաղթանակը: Մարտյան հարձակողական մարտերի շրջանում թերթը գովաբանում էր հայկական զորամասերի անվեհեր մարտիկներին, նրանց օրինակով դաստիարակելով մյուսներին:

«Հայկական սննդային» թերթը հատուկ համար է նվիրել սիրելի հրամանատար գնդապետ Սիմոն Ջաքյանին, որը թշնամու դեմ մղվող դամանկոճիներում առաջնորդելով հայ ռազմիկներին, անձնագոհության և հերոսության լավագույն օրինակներ ցույց տվեց և ընկավ մարտում: Ավագ գումարտակային կոմիսար ընկեր Մուրեն Թովմասյանը կարմիրբանակայինների միտինգում և թերթի էջերում հրապարակված իր ելույթի մեջ հայ ռազմիկներին կոչ է անում Ջաքյանի օրինակով մարտնչել թշնամու դեմ: «Ընկեր Ջաքյանը ընկավ մարտական պոստում, — ասում է նա: Մենք, նրա մարտիկներս, հրամանատարներս ու քաղաշխատողներս, նրա դագաղի առաջ խոսք ենք տալիս վրեժխնդիր լինել գազազած թշնամուց մեր լավագույն հրամանատարի կյանքի համար»:

«Հայկական սննդային» թերթը սկզբից մինչև վերջ խմբագրում էր ավագ քաղցեկ ընկ. Բ. Հովհաննիսյանը: Խմբագրության աշխատողները ամբողջ աշխատանքը ծավալելով ռազմաճակատի առաջավոր պոչին մոտ, հաղթահարելով պատերազմական իրադրության դժվարությունները, կապ էին պահպանում մարտիկների հետ, կազմակերպում էին հերոսների ելույթները և տպում թերթի էջերում, հարստացնում էին թերթի բովանդակությունը: «Հայկական սննդային» թերթի 1942 թ. մարտ-մայիս ամիսներին լույս տեսած համարները թերթելիս այսօր էլ մենք մտքով փոխադրվում ենք հերոշի թերակզգում մղվող հերոսական կռիվների ժամանակները:

1942 թ. հունիսի վերջերին Վորոշիլովգրոտ քաղաքում «Во славу родины» թերթին կից հիմնադրվեց հայերեն «Հանուն հայրենիքի փառքի» թերթը, որը տարածվում էր Դոնբասում և Դոնի տափաստաններում թըշնամու դեմ կռվող հայ գինվորների մեջ: Այդ թերթը խմբագրում էր գումարտակային կոմիսար ընկեր Մովսես Գրիգորյանը: Խմբագրությունը ստիպված էր լինում վերապրել 1942 թ. ամառային նահանջի բոլոր դժվարությունները: Գրեթե ամեն օր խմբագրությունը փոխում էր իր աշխատանքի վայրը, հաճախ պատրաստի կապված էջերը փոխադրելով մի քանի տասնյակ կիլոմետրներ: Թերթը առաջին համարում հայ մարտիկներին հիշեցնում է գինվորական երդման սրբազան խոսքերը և պահանջում սրբությամբ կատարել այդ երդումը:

Մարտիկ, եղիր հավատարիմ գինվորական երդմանը. մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանիր Սովետական Հայրենիքը. բնաջնջիր հիտլերյան ավազակներին: Թող քո սրտի խորքում և գիտակցության մեջ միշտ հնչեն գինվորական երդման խոսքերը: Երդման խոսքերով մարտի գնահանուն մեր մեծ հայրենիքի, հանուն բոլշևիկյան պարտիայի, հանուն մեր մեծ առաջնորդ Ստալինի: Մարտիկ, Հայրենիքը դարբերով չի մոռանա քեզ և քո սխրագործությունը:

Թերթը իր էջերը տրամադրել է Դոնբասի և Դոնի տափաստաններում մղվող կռիվներին մասնակցող հրամանատարներին ու քաղաշխատողներին, որոնք ռեալիստորեն տոգորված, ճշմարտացի նյութերի մեջ

պատմում են դաժան կռիվների ամենանշանավոր հերոսների մասին: Թերթը փառաբանում է Դոնի հերոսներ մայրը Վահան Վարդանյանին, մայրը Մուշեղ Կարապետյանին, և ուրիշ շատերի, որոնք պաշտպանողական ծանր մարտերում ցուցաբերում էին կայունություն և սրբություն կատարում էին բարձր հրամանատարության դիրքերի վրա: Գերմանական զավթիչների հորդան անցնելով Դոնը, ներխուժեց դեպի Հյուսիսային Կովկաս: Ստավրոպոլի տափաստանները դարձել էին տանկային անեղ ճակատամարտերի և հրետանային համազարկերի թատերաբեմ: Այդ փոթորիկների մեջ «Համուց հայրենիքի փառքի» Թերթը դիմելով Կովկասի պաշտպաններին, նրանց կոչ է անում պաշտպանել սովետական հողի ամեն մի թիղը և կանգնեցնել թշնամուն:

Թերթի վերջին համարը ռազմիկներին դիմում է հետևյալ խոսքերով. «Գազազած թշնամին կատաղորեն առաջ է շարժվում դեպի սովետական հարավը, դեպի Կուբանի ցորենը և Կովկասի նավթը: Փակենք դերմտնական զավթիչների ճանապարհը, տապալենք նրանց ավազակային պլանները:

Հարավը պետք է մնա սովետական, նա կմնա սովետական»:

1941 թ. հունիսից սկսվեց Կովկասի համար մղվող մեծ ճակատամարտը: Սովետական զորքերը Կովկասը պաշտպանում էին Սև ծովի ափերում, Կովկասյան դլխավոր լեռնաշղթայի լեռնանցքներում և նախալեռներում: 1942 թ. օգոստոսին գերմանական զորքերը արդեն դուրս էին եկել Թերեքի միջին հոսանքը: Մոզդուկի շրջանը և Տուափսեի մատույցները, անմիջական վտանգ սպառնալով Սովետական Վրաստանին, Ադրբեջանին և Հայաստանին: Կովկասի վրա կախված անեղ վտանգի այդ օրերին ամբողջ հայ ժողովուրդը ռազմաճակատում և թիկունքում պայքարի էր դուրս եկել թշնամու դեմ, մեր հայրենիքը պաշտպանելու համար:

Անդրկովկասյան ռազմաճակատի տարրեր հատվածներում հրատարակվում էին հայերեն մի քանի թերթեր: «Առաջ դեպի հաղթանակ» թերթը հիմնվեց 1942 թ. սեպտեմբերին «Հանուն հայրենիքի փառքի» թերթի բազայի վրա, որն արդեն դադարել էր հրատարակվելուց և խմբագրությունն անցել էր նոր թերթի աշխատանքին: Այդ թերթը տարածվում էր Սև ծովի կովկասյան ափերը պաշտպանող ռազմիկների մեջ և նրանց արիության ոգի էր ներշնչում կանգնեցնելու թշնամու առաջարժումը:

«Ստ նանտպարի չկա, ետ ոչ մի քայլ,— այդպիսին է հայրենիքի հրամանը» — գրում է թերթը: «Անչափ մեծ է Առաջ դեպի հաղթանակ» թերթի կազմակերպչական աշխատանքը Սև ծովյան խմբի զորքերի մեջ: Խմբագրությունը կազմակերպում էր կարմիրբանակայինների միտինգներ, այդ միտինգներում հանդես եկող մարտիկների հայրենասիրական կրակոտ ելույթները հրապարակում թերթի էջերում, տարածում բոլոր գինվորների մեջ: Թերթը ամեն օր իր էջերում տպագրում էր կարճ ինֆորմացիաներ ռազմաճակատի առաջավոր գծից, որոնց մեջ հաղորդում էր, թե ո՞ր մարտիկը քանի գերմանացի է սպանել: Հոկտեմբերի 22-ին թերթի էջերում կարդում ենք «Մեր սնայպերների մարտական հաշիվը» հաղորդագրությունը, որի մեջ նշված է. լեյտենանտ Կարտաշևը ընաջնջել է 23 գերմանացի, շարքային Քոչինյանը՝ 19 գերմանացի, սերժանտ Յուդինը՝ 15, լեյտենանտ Կրասնովը՝ 15 և այլն: Այդ հաղորդագրությունները հսկայական հետաքրքրություն էին առաջ բերում մարտիկների մեջ: «Առաջ դեպի հաղթանակ» թերթը բացառիկ հետաքրքիր փաստաթղթեր է հրապարակել գերմանական բանակի

չարագործությունների մասին կովկասի օկուպացված շրջաններում, «Բարեկամներ, — դրում է թերթը, — լսեցեք սարսափելի ճշմարտությունը — կերեսելիձեռի և նրա հետ միասին փախած ֆաշիզմի բանտարկյալների պատմածները»։ Նույն համարում թերթը մեծ լողունգով գրում է. «Ֆաշիստական զերությունը ամենասարսափելի դժոխքից էլ վատ է»։ Թերթը տպագրել է բազմաթիվ լուսանկարներ, որոնց մեջ պատկերված են գերմանական զինվորների ու սպանների զոհը դարձած սովետական քաղաքացիների խոշտանգված և տանջամահ տրված մարմինները, «Առաջ դեպի ետդրանակ» թերթը իր ընթերցողների մեջ դաստիարակում էր կիզող ատելություն դեպի թշնամին և մեր մարտիկներին ոգեշնչում էր կռիվ գնալու, վրեժ առնելու թշնամուս։

Անդրկովկասյան ռազմաճակատի գործերի մեջ լայն աշխատանք էր ծավալում «ԲԿԿ» մարտիկ թերթը, որը հանդիսանում էր ֆրոնտի ռազմաճակատի օրգանը և հրատարակվում էր «Боец РККА»-ին կից։ Այդ թերթը սկսեց հրատարակվել 1942 թ. հոկտեմբերից և շարունակվում է մինչև այժմ։

Ինչպես կովկասի պաշտպանության, այնպես էլ գործերի հարձակողական մարտերի ժամանակաշրջանում թերթը տարածվում էր ռազմաճակատի բոլոր հատվածներում, հայ գինվորներին դաստիարակում էր հայրենասիրության և հերոսության ոգով, նրանց ոգեշնչելով հայրենական պատերազմի, Այգ թերթի էջերից, որպես հարմար տրիբունից, ելույթ էին ունենում բազմաթիվ հերոս մարտիկներ և հրամանատարներ, որոնք պատմում էին կովկասի համար մղած իրենց կռիվների մասին, նրա լջերում սխտեմատիկաբար տպագրվում էին Հայաստանի պարտիական աշխատողների, զիտություն և զրականության ամենանշանավոր գործիչների հողվածները, որոնց մեջ հեղինակները պատմում էին, թե ինչպես է հայ ժողովուրդը անձնուրաց աշխատանքով օգնում ռազմաճակատին և ինչպիսի պահանջներ է ներկայացնում ռազմաճակատում կռվող հայ գինվորներին։ Այդ թերթի բովանդակությունը բազմակողմանի է և հարուստ։ Նրա կոմպլեկտները կազմում են վեց հաստափոր զրքեր, որոնց էջերում գրի են առնված հայ ժողովրդի մղած մարտերը և նրա աշխատանքային սխրագործությունները Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։

Թերթի առաջին համարներից մեկում ակադեմիկոս Օրբելին գիմում է կովկասի պաշտպաններին.

«Եղբայրներ, կովկասի մատույցներում թշնամու դեմ կռվող կարմիր Բանակի մարտիկներ, մոտեցել է վճռական մարտերի ժամը. դուք պետք է կռվեք հայրենի կապույտ երկնքի տակ, կովկասի սրբազան լեռների մատույցներում, լեռներ, որոնք երբեք չեն իմացել ստրկություն, երբեք չեն հանգուրժել ստրկական նվաստացում ու անարպանք»։

Երբ սասցվեց հայ ժողովրդի պատմական նամակը ֆրոնտում գտնվող հայ գինվորներին, թերթը լայն աշխատանք ծավալեց այդ նամակի շուրջը։ Նամակը քննարկվում էր մարտիկների ժողովներում, ընդունվում էին պատասխան-նամակներ և այդ պատմական փաստաթղթերը հրատարակվում էին թերթի էջերում։ «Մարտիկ»-ը պահանջում էր հայ գինվորներից շարունակել հարձակումը, հետապնդել թշնամուն մինչև նրա լիակատար ջախջախումը և մեր Հայրենիքն աղատագրել գերմանական զավթիչներից։

Թերթը լայնորեն լուսաբանում էր հայ ռազմիկների փառապանծ արադիցիաները կռիվների ժեղ և այդ տրագիդիաները տարածում ու բազմաց-Տեղեկագիր 1—6

նում էր ընթերցողների մեջ: «Եղեք նույնպիսի անվեհերներ» աչքի ընկնող լոգունգի աակ թերթը ամբողջ համար է նվիրել կովկասյան ճակատամարտի քսան անվեհեր հերոսներին, որոնք 1942 թ. ղեկտեմբերին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության որոշմամբ արժանացան Սովետական Միության Հերոսի կոչման: Թերթի էջերում բազմաթիվ նյութեր են տպված կովկասը պաշտպանող ուկրաինացի, ռուս, ուզբեկ, սիբիրցի, վրացի, հայ և այլ ազգությունների մարտիկների մասին, որոնք մարտական եզրայրություններ և բարեկամություններ միաձուլված, փոխադարձ օգնության միջոցառում կոչում էին թշնամու դեմ:

«Մարտիկ»-ի խմբագրությունում աշխատում էին բանաստեղծներ Գուրգեն Բորյանը և Ղևոնդ Կոմունին: Խմբագրության աշխատողները, հաճախ այցելում էին զորամասերը, կազմակերպում էին նյութեր կովկասի պաշտպանության առանձին խնդիրների մասին և մասսայականացնում ընթերցողների մեջ: Թերթը հատուկ աշխատանք էր տանում հայ մարտիկներին ռազմագիտություն սովորեցնելու ուղղությամբ: Թերթի էջերում տպագրված են «Փորձված զինվորների խոսքը», «Մնայակերների դասընթացը», «Հետախույզների դպրոցը», «Վարդիականի տրիբունը», «Պարտաշխատողի տրիբունը» հոդվածների շարքը, որոնց մեջ ռազմաճակատի ամենանշանավոր և փորձված հերոսները ընթերցողներին պատմում են կովկասի համար մղված կռիվների մասին, կարմիր Բանակի կիրառած տակտիկայի մասին, մեր ձեռք բերած մեծ հաղթանակների մասին:

Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերում նշանավոր դեր խաղաց «Առաջ, հանուն հայրենիքի» թերթը, որը հանդիսանում էր Հյուսիսային Կովկասյան խմբի և ավելի ուշ Հյուսիսային Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության օրդան «Вперед за родину» թերթի ճյուղը: «Առաջ, հանուն հայրենիքի» թերթը հիմնադրվեց 1942 թ. ղեկտեմբերին Գրոգնի քաղաքում: Նրա առաջին համարը լույս տեսավ 1943 թ. հունվարի 1-ին: Այդ ժամանակ որպես թերթի խմբագիր աշխատում էր ոնկեր Արշավիր Հակոբյանը:

Առաջին իսկ համարից «Առաջ, հանուն հայրենիքի» թերթը Հյուսիսային Կովկասում գործող զորամասերին կոչ էր անում արագացնել հարձակողական թափը: «1943 թ. թշնամուն հարվածներ է՛լ ավելի շեշտակի ամբողջությամբ ոչնչացնենք Հյուսիսային Կովկասում գործող գերմանա-ֆաշիստական զորքերին»: Այդ լոգունգով թերթի առաջին համարը գնաց հայ մարտիկների մոտ: Խմբագրության աշխատակիցները գնում էին հարձակվող ստորաբաժանումների հետ, մասնակցում էին Հյուսիսային Կովկասի քաղաքների ազատագրմանը, առաջինների հետ մտնում էին սովետական քաղաքները և այնտեղից հաղորդում էին թարմ, ստուգված նյութեր զորքերի մարտական գործողությունների մասին:

Մոզգոկի ազատագրումից հետո «Առաջ, հանուն հայրենիքի» թերթում տպագրված է քաղաքի բնակիչ Ռիմա Գալստյանի նամակը հայ զինվորներին: Այդ նամակում ասված է. «Հայ մարտիկ, ուզում ես իմանալ այն ճնորկարի մասի որ Հիտլերը մտցրել էր օկուպացիայի ենթարկված մեր քաղաքներում ու գյուղերում: Լսիր՝ պատմեմ աչքիս տեսածը: Գերմանացիները գալուն պես հայկական դպրոցը կործանեցին, մյուս բոլոր դպրոցներում, թատրոնում և հասարակական այլ շենքերում ձիեր կապեցին: Վեց

ամիս շարունակ կարծես խավար էր լիջել քաղաքի վրա, ոչ դպրոց կար, ոչ թատրոն, ոչ կինո, ոչ խանութ... Բոլորիս քշեցին տաժանակիր աշխատանքի, որից հրաժարվողներին գաղանաբար սպանում էին... Ի՛նչ օրեր ասես, որ չքաղցինք Հիտլերի ստեղծած այդ «նոր կարգում»: Ձգվանքով եմ հիշում այդ նոր կարգը: Սիրտս թնդում է ուրախությունից որ դուք, իմ հարազատներ, չխնայելով ձեր արյունը, հալածում եք գաղիթ թշնամուն: Հետապնդեցե՛ք այդ սրիկաներին, ընկերներ. չթողնե՛ք շունչ քաշեն. կոտորեցե՛ք այդ մարդակերներին, որ հովանա զրկանքներից մղկտացող իմ սիրտը»:

Այդ և ուրիշ նամակներ, որոնք հրապարակված են թերթում, մեր մարտիկների մեջ պաստիարակում էին անեղ ատելություն դեպի թշնամին և նրանց մեջ ավելի էին բորբոքում վրիժառուության կիրքը:

1942 թվի վերջերսից թերթի խմբագրությունը Գրողնուց փոխադրվեց Կրոպոտկինո: Հետևելով մեր հարձակվող զորքերին, խմբագրությունը Կրոպոտկինոյից շարժվեց առաջ, աուլից-աուլ, կայարանից-կայարան: Ամբողջ խմբագրությունը և տպարանը գտնվում էին բնանատար մեքենաների վրա: Ինչպի կրասնոզար գնալու ճանապարհին խմբագրության մեքենան ենթարկվեց ուժեղ ռմբակոծության, որի ժամանակ ուժերի բեկորից սպանվեց գրաշար Սմիրնովը, որից հոսող արյունը ներկել էր թերթի կոմպլեկտը:

1943 թ. ապրիլին «Առա՛ջ դեպի Կապուցյան»-ը միացվեց «Առա՛ջ, Կապուցյան Կապուցյան»-ին: Իսկ գերմանացիների Քամանյան պլացդարմը լիկվիդացվելուց հետո՝ Ղրիմում, Մոսկուս Գրիգորյանի խմբագրությամբ:

Թերթի էջերը հարուստ են Քամանյան թերակղզում հայ գինձորների և նրանց եղբայրների մղած կռիվների մասին հետաքրքիր նյութերով և փաստաթղթերով: Թերթը առաջին էջում տպում էր «Փառք խիզախ հրամանատարներին և մարտիկներին» մշտական բաժինը: Այդ բաժնում համառոտ կերպով սխտեմատիկաբար տպագրվում էին ամենաաչքի ընկնող ռազմիկների մարտական գործերը, վեր էին բարձրացվում այդ մարտիկները և ժողովրդականացվում էր նրանց փորձը: Կարելի է ասել, որ թերթն ընդգրկում էր ռազմաճակատում կատարվող ամենից կարևոր իրադարձությունները:

1943 թ. նոյեմբերի սկզբներին, երբ մեր զորքերը ղեսանտ հանեցին Կերչի թերակղզում, «Առա՛ջ, Կապուցյան Կապուցյան» թերթը ամեն օր լույս էր տեսնում «Տուր Ղրիմը» մարտական լուրերով: «Գերմանա-Ֆաշիստական լծից ազատագրենք մեր հայրենիքի մարգարիտը— Ղրիմը», — այսպես է գրում թերթը: Նրա էջերում տպված ակնարկները և նամակները պատկերում են Կերչի և Սևաստոպոլի ազատագրման համար հայ գինձորների մղած բազմաթիվ հերոսամարտերի հետաքրքիր էպիզոդներ:

«Առա՛ջ, Կապուցյան Կապուցյան» թերթը գաղարեց հրատարակվելուց 1944 թ. վերջերին, երբ Ղրիմում ջախջախված էին գերմանական զավթիչները և Ղրիմը վերագործված էր սովետական հարազատ ընտանիքը:

Կովկասի համար մղվող մարտերում, ինչպես և մեր հայրենիքի ազատագրման գործում հետաքրքիր էջեր գրեցին հայկական երեք միավորումների կարմիր-բանակային թերթերը— «Կարմիր զինվոր»-ը, «Հանուն Կապուցյանի»-ն և «Մարտական որոշ»-ը:

«Կարմիր զինվոր»-ը հանդիսանում է հայկական թամանյան 89-րդ եռակի շքանշանակիր դիվիզիայի հրամանատարութեան օրգանը, որը սկսել է լույս տեսնել 1942 թ. սկզբներից: Նույն թվի օգոստոսին թերթը դիվիզիայի գործառնների հետ միասին գտնվում էր Գրոզնու մատույցներում Ֆաշիստական հորդանների դեմ մղվող կռիվներում: Այդ օրերից սկսած մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտումը, մինչև Բեռլինի հռչակավոր հաղթական դրոշմը, «Կարմիր զինվոր»-ը ընթանում էր հերոսական դիվիզիայի մարտակարգերում, իր տղերով ոգեշնչում էր հայ ռազմիկներին փառքով օժեցնելու հայ ժողովրդի պատիվը: Պաշտպանողական մարտերի շրջանում թերթի էջերում լուսաբանվում էր զերմանական զավթիչների կատաղի գրոհները ետ մղող զինվորների մարտական կյանքը: Այդ շրջանում թերթը խմբագրում էր ավագ քաղղեկ Գուրգեն Հարությունյանը:

1943 թ. հունվարի 1-ից դիվիզիայի գործառնները հարձակվում էին «Կարմիր զինվոր»-ի էջերում լուսաբանված է Հյուսիսային Կովկասի քաղաքներում և գյուղերում մղվող ազատագրական մարտերի հերոսների կյանքը: 1943 թ. աշնանը, երբ սկսվեց Կարմիր Բանակի վճռական հարձակումը թամանյան թերակղզին ազատելու համար, «Կարմիր զինվոր» թերթը համառ աշխատանք էր կատարում հայ մարտիկներին նախապատրաստելու այդ հարձակողական մարտերին: Թերթի նոր խմբագիր կապիտան Սիմոն Նալբանդյանը և խմբագրութեան մյուս աշխատողները ջանասեր աշխատանքով ապահովում էին թերթի օպերատիվությունը, նյութերի թարմությունը և մարտական իրադրությունների ճիշտ լուսաբանումը: Նրանց կազմած կերպած հոդվածների մեջ շարադրված է մանր ստորաբաժանումների և առանձին ռազմիկների մարտական փորձը, որ ձեռք էր բերվել թերթի ավերից սկսած մինչև Կուրանի դաշտավայրերում մղվող կռիվներում:

Թերթը հատուկ համարներ է նվիրել Սովետական Միության Հերոսներ Հունան Ավետիսյանի, Սուբեն Առաքելյանի և Ջահան Կարախանյանի սրխրագործություններին: Պերչի ազատագրման համար մղվող կռիվների ժամանակ թերթը հասնում էր փողոցային մարտերի մասնակիցներին, նրանց բացատրում էր բնակավայրում մղվող կռիվի առանձնահատկություններն ու պրիոմները: Սևաստոպոլի ազատագրման համար մղվող մարտերի օրերին 1944 թ. մայիսին «Կարմիր զինվոր»-ում տպվում էր «Փնոք Լրիմի հերոսներին» հոդվածների շարքը, որոնց մեջ ամենավառ գույներով նկարագրված են հայ հերոսների լավագույն գծերը:

«Կարմիր զինվոր» թերթի գործունեության ամենահետաքրքիր շրջաններից են Օդերի Ֆրանկֆուրտում և Բեռլինում մղված կռիվներին նվիրված համարները: Թերթը հրատարակվելով Օդերի արևելյան ափում, լուսաբանում էր արևմտյան ափում, «Հայկական պլացդարմ»-ում Հայաստանի զավակների մղած կռիվները: Երբ մեր զորքերը մոտենում էին Բեռլինին, «Կարմիր զինվոր»-ի մի համար լույս ընծայվեց «Առաջ տար հաղթական սուրդ» նշանավոր առաջարկով, որի մեջ ասված է.

«Կարմիր Բանակի քաջարի զորքերը հաղթանակի մարտեր են մղում հիալերյան զավթիչների դեմ... Սովետական ռազմիկ, հիմա հաղթությունք քեզ սպասում է ամեն բոլոր, ամեն ժամ... Թիր հիալերյան գազանին... Առաջ տար Բեռլինի վրա բարձրացրած հաղթանակի սուրդ... Առաջինը հաղթանակի դրոշմ բարձրացրու Բեռլինի վրա»:

Այդ խոսքերը խանդավառությամբ էին առգորում Բեռլինը շրջապատողների մեջ գտնվող հայ ռազմիկներին: Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ 1945 թվի մայիսի 2-ին Բեռլինը ընկավ: Հայ զինվորները Կարմիր Բանակի շարքերում հաղթական երթով անցան Բեռլինի պողոտաներով: Նրանց հետ այդ երթին մասնակցում էր «Կարմիր զինվոր» թերթը:

«Հանուն հայրենիքի» թերթը 1942 թ. սեպտեմբերի վերջին հայկական գործառույթների հետ փոխադրվեց Տուսփսի շրջանը: Այնտեղ, մարազական գործողությունների առաջավոր գծից երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա, լույս էր տեսնում այդ թերթը: «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիրն էր ավագ քաղղեկ Աշ. Հակոբյանը: Առաջին համարից սկսած թերթը հայ ռազմիկներին բացատրում է գերմանա-ֆաշիստական զավթիչների նենգ մտադրությունները կովկասը զավթելու և կովկասի ժողովուրդներին իրար դեմ հրահրելու ուղղությամբ, կոչ է անում նրանց պայքարել իրար դեմ պրովոկացիայի գեմ, լինել զգաստ: «Էլեռները մեր տունն են, խարույկները մեր օջախները, իսկ մենք բոլորս արյունակից եղբայրներ: Թող գերմանացին սարսափի մեր սրտերի կրակոտ բարկությունից» — գրում է «Հանուն հայրենիքի» թերթը 1942 թ. հոկտեմբերի 2-ի համարում: Ժողովուրդների բարեկամությունը, ռազմաճակատային մարտիկների միաձուլությունը հաղթանակի առաջին և կարևորագույն պայմանն են, բացատրում է թերթը: Հայերեն թարգմանվել և թերթի առաջին էջում տպվել են Արևմտյան կովկասի ժողովրդական հին երգի հետևյալ խոսքերը բարեկամության մասին.

«Եթե արևը եռօրին ու գաշտին չբերմացնե,
Մի՞թե խոտերը կարող են այնտեղ ծիլեր տալ թել-թել.
Եթե մի կամփը, մի միտփն ու եռօրին մեզ միացնե,
Մի՞թե թշնամին մեզ իր նենգությամբ կարող է հազրել»:

Այդ ոգով են ներծծված թերթի հոդվածները, լրագրողները, կոչերը: «Հանուն հայրենիքի» թերթում հրապարակված են հայկական գործառույթների մղած հաջող կռիվների մի քանի էպիզոդներ և բանակի ռազմական խորհրդի նամակը հայ ռազմիկներին: Այդ նամակում ասված է.

«Ի՞նչ կատարեցիք ձեր առջև գրված մարտական խնդիրը և դուրս եկաք ձեզ ցույց տրված բնագիծը... Ձորամասերի անձնակազմը մարտընչում էր լավ և անվերականգնելի կորուստներ պատճառեց հակառակորդի կենդանի ուժերին ու տեխնիկային... Ձորամասերի ամբողջ անձնակազմին ռազմական խորհուրդը հայտարարում է շնորհակալություն»:

Թերթը հատուկ համար է նվիրել հրետանային ստորաբաժանումներին, որոնք առանձնապես աչքի ընկան ծանր մարտերում:

Թերթի խմբագրության աշխատանքը կատարվում էր թշնամու ուժակոծությունների ծանր պայմաններում, սակայն խմբագրության աշխատողները հմտությամբ և կայունությամբ հաղթահարում էին դժվարությունները:

Հայկական մեկ ուրիշ միավորման հրամանատարության օրգան «Մարտական դրոշ» թերթն սկսեց հրատարակվել 1942 թ. փետրվարի 23-ից: Թերթի խմբագիրն էր Հարություն Մկրտչյանը:

1942 թ. փետրվար—նոյեմբեր ամիսներին լույս տեսած համարներում խմբագրությունն աշխատում էր խաղաղ ուսուցման պայմաններում, իր գործունեությունն ուղղելով զինվորների մարտական պատրաստության խնդիրներին: 1942 թ. դեկտեմբերից թերթը զորամասերի հետ միասին մարտերի մեջ մտավ Մոզզոկի շրջանում: Մարտական դրություններում սկսեց հրատարակվել փոքր ծավալով, ավելի հաճախ, օրամեջ կամ ամեն օր: Խմբագրությունը կենդանի կապ էր պահպանում ստորաբաժանումների հետ, մոտիկից ծանոթ էր զինվորների կյանքին, որի շնորհիվ թերթի էջերում լուսարանված է հայկական զորամասերի, մանր ստորաբաժանումների և առանձին մարտիկների մղած կռիվների հարուստ փորձը:

«Մարտական ռոնշ»-ի ամենահետաքրքիր նյութերից են պարտիական կյանքին նվիրվածները: Նրանց մեջ մենք տեսնում ենք, թե ինչպես հայ ժողովրդի հազարավոր գավակներ ուղարկվում, մահացու կռիվների պահին մտնում էին բուլղարիների պարտիայի շարքերը և գրոհի գնում որպես կոմունիստներ: Դեկտեմբերի 31-ին թերթը նվիրված է պարտ. հանձնաժողովի մի նիստին, որը տեղի է ունեցել բլինդաժում: Նիստում քննվել են պարտիայի մեջ ընդունելության հարցեր:

«Մեկը մյուսի հետևից ներս են մտնում զինված մարտիկներ, — գրում է թերթը, — մոտերքում արկեր են պայթում: Հրետանային մենամարտ է: Գալիս է Արամայիս Գրիգորյանը: Նա քաջ ուղիղ է: Մեկ անգամ մարտում ջոկի հրամանատարը վիրավորվեց, Գրիգորյանը ղեկավարեց ջոկը: Մի ուրիշ անգամ արկը պայթեց Գրիգորյանի կողքին և նա մնաց հողի շերտի տակ: Արագ դուրս գալով փոսից, նա շարունակեց մարտիկներին տանել գրոհի...»:

Այսպես մեկը մյուսի հետևից պարտիայի մեջ էին մտնում ամենից քաջ, հերոս զինվորները և գնում էին կովի որպես Լենինի—Ստալինի պարտիայի անդամներ: Թերթը կարողանում էր իր էջերում ցույց տալ, որ ճակատամարտում կոմունիստի կերպարը սովետական հերոսի կերպարն է, որի օրինակը ոգևորության աղբյուր էր հանգիստանում բոլոր զինվորների համար:

Մարտակառն դրսը, թերթը հայկական զորամասերի հետ մասնակցեց Մոզզոկի ազատագրմանը, անցավ Թերեքը, Հյուսիսային Կովկասի տափաստանները, Իոնի հարթությունը: Նրա վերջին համարները տպվում էին Միլլերովո քաղաքում 1943 թ. ամառը: Այդ շրջանում թերթը լուսարանել է Հյուսիսային Կովկասում հայկական զորամասերի մղած կռիվները, հայրազնային զինվորների քաջագործությունները:

Այսպիսով, Կովկասի համար մղվող կռիվներում 1942-1943 թ. թ. հայկական ճակատային և միավորումների թերթերը նշանավոր դեր խաղացին հայ զինվորների ուղիղ և քաղաքական դաստիարակության գործում, ուղիղների եղբայրության և ինտերնացիոնալ բարեկամությունն ամրապնդելու խնդիրներում: Այդ թերթերի խմբագրություններում աշխատող ժուռնալիստների և գրողների հրապարակախոսական նյութերը, փոքրիկ հողվածները, գեղարվեստական արձակ և չափածո երգերը, ինչպես և խումբագրությունների կազմակերպած նամակներն ու այլ փաստաթղթերը կարևոր արմատ ունեցող աղբյուրներ են Կովկասյան ճակատամարտի պատմության համար:

Մեր երկրի ժողովուրդները միասնական ին և միաձուլը, Ինչպես ուս-
ները, ուկրաինացիները, բելոսուսները և ուրիշ ժողովուրդների գավակները
կոչում էին Կովկասի լեռնանցքներում, Թերեքի և Ղիզի փեթերին, այն-
պես էլ Կովկասի գավակները մարտնչում էին Մոսկվայի ու Լենինգրադի
մատույցներում, Դնեպրի և Դոնի փեթերին: Այդ տեսակետից կարևոր նշա-
նակություն ունեն «Ինչի քննամու օպիսոսիսումը, Սուվորովսկոն և Սո-
վետական ռազմիկ թերթերը:

«Ինչի քննամու օպիսոսիսումը թերթը հանդիսանում էր Բրյանսկի
ֆրոնտի «На разгрома врага» թերթի հայկական ճյուղը: Այդ թերթը սկսեց
լույս տեսնել 1942 թ. հուլիսի 3-ից: Թերթի խմբագիր մայոր Վարդան
Վարդանյանը և նրա աշխատակիցները ռազմական գործողությունների
պայմաններից ելնելով, հաճախ փոխում էին թերթի հրատարակության վայ-
րը: Ելեց, Սասնայա Պոլյանա, Տուլա, Բրյանսկի անտառներ, Պլավսկ—
ա այն վայրերը, որտեղ կանգնում էր խմբագրության մեքենան և կազ-
մակերպվում էր թերթի հրատարակությունը:

«Ինչի քննամու օպիսոսիսումը թերթի նշանակությունն այդ ճակա-
տում հատուկ կարևորություն ուներ: Բազմաթիվ հայ մարտիկներ ծառա-
յում էին Կարմիր Բանակի ինտերնացիոնալ գործմասերում, կոչում էին
Մոսկվայի հարավում, Բրյանսկի անտառներում, Միջին Ռուսաստանի
տափաստաններում: Նրանց հեռ մայրենի լեզվով կատարվող քաղաքական
աշխատանքը, մանավանդ տպագրի խոսքը, այդ մարտիկների շոգերանու-
թյան վրա ներգործում էր հսկայական ուժով, ձևավորելով նրանց խա-
րակտերները, պատերազմական իրադրության մեջ նրանց վարքագիծը:

«Ինչի քննամու օպիսոսիսումը թերթի աշխատանքի ամենարևոտը կող-
մը նյութերի անմիջականությունն է և կոնկրետությունը, որը ներգործող
մեծ ուժ ուներ: Ինչպես հայտնի է, 1942 թ. հուլիս—օգոստոսին Դոնի տա-
փաստաններում և Կորոնեթի մատույցներում տանկային մեծ մասշտաբի
մարտեր էին մղվում: Թերթը հայ մարտիկների հետ խոսում էր այն ամե-
նակարևորի մասին, ինչ հարկավոր էր նրանց. «Սպանիր գերմանացուն»
առաջնորդող հողվածում թերթը այսպիսի հարցով է զիմում ընթերցողնե-
րին. «Ընկեր, քանի՞ գերմանացի ես սպանել զու այսօր...»: Այնուհետև
թերթը հաղորդում է, որ «Սերժանտ Դուկասյանը տաս օրում սպանել է 20
գերմանացի—ամեն օր երկուսը. իսկ զու քանի՞ գերմանացի ես սպանում
օրական»: Թերթը մեծ տառերով գրված լոզունգում մարտիկներին հիշեց-
նում է. թե «...Այն օրը, որ զու իժ չես սպանել, այդ օրը կորած է»:

1943 թ. հուլիսի 5-ից գերմանական զրահատանկային խոշոր ուժերը
հարձակման անցան Կուրսկի ուղղությամբ: Հազարավոր տանկեր էին բախ-
վում մարտադաշտում: «Ինչի քննամու օպիսոսիսումը թերթը հայ գին՝որնե-
րին սովորեցնում էր թշնամու «տիգրերին» և «պանտերաներին» հաղթելու
գիտությունը: «Քրամատը քո ամրոցն է, ընկեր», կարդում ենք թերթի
ճակատին տպված աչքի ընկնող լոզունգը: Ապա թերթը պահանջում է
խրամատը փորել այնքան, որպեսզի մարտիկը կանգնի հասակով մեկ և չե-
րևա, որպեսզի գերմանական տանկը փոսի վրայով անցնի, իսկ անփասս
ռազմիկը տանկի հետևից գուրս դա և հրկիզի ֆաշիստական հրեշին:

Օրյու-Կուրսկի մեծ ճակատամարտի օրերին թերթը տպել է մի խումբ

հայ գինվորների նամակը. «Մենք, հայ ժողովրդի զավակներս, չենք թողնի, ու մեր հերոսական ժողովրդի պատիվն ընկնի: Մենք մեր արյունը չենք խնայի Սովետական երկրի փառքն ու պատիվը պաշտպանելու համար: Քանի մեր կրծքում շունչ կա, չենք դադարի հարվածներ հասցնել թշնամուն, կհարվածենք մինչև վերջնական հաղթանակը»:

1943 թ. հոկտեմբերին «Դեպի թշնամու ջախջախումը» թերթի խմբագրությունն ու տպարանը Բրյանսկի ռազմաճակատից փոխադրվեցին Մերձբալթիկտ: Մերձբալթյան երկրորդ ռազմաճակատի «Сысоровец» թերթն սկսեց հրատարակվել նաև հայերեն լեզվով, «Սովետական» անունով: «Սովետական»-ի խմբագրությունում աշխատում էին խմբագիր մայոր Վարդան Վարգանյանը, գրող, գվարդիայի կապիտան Հրաչյա Բոչարը և ուրիշները: Այդ ընկերների աշխատանքը շնորհալի էր և պտղաբեր:

«Սովետական» թերթի գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում սովետական գինվորական փառքի պրոպագանդան: Թերթը հայ ռազմիկներին զրահորել է նրանց մղած կռիվների ու մաքառումների մեջ, ռազմի փառքի կեռման ուղիներում: 1943 թ. նոյեմբերի 8-ին ՍՍՌԿ Գերագույն Սովետի նախագահությունը հիմնեց «Փառքի» շքանշանը, որով պարգևատրվում էին աչքի ընկած շարքայիներն ու կրտսեր հրամանատարները: «Սովետական»ը պարզ, հասկանալի լեզվով հայ ռազմիկներին բացատրում էր, թե ի՞նչ պետք է անել «Փառքի» շքանշանին արժանանալու համար: Յուրաքանչյուր մարտիկ աշխատում էր արժանանալ «Փառքի» շքանշանի առաջին կավալերը դառնալու մեծ պատվին: «Սովետական»-ը այդ միտքը ներշնչում էր իր ընթերցողներին:

Հայ դյուցազուն Դևորգ Հովհաննեսի Իսրայելյանը այդ օրերին մի գիշեր գնալով հետախուզության, անակնկալ կերպով հանդիպեց թշնամու ստորաբաժանմանը և իր ընկերների հետ ձեռնամարտի բռնվեց թշնամու դեմ: Այդ մարտում Իսրայելյանը ինքը բնաջնջեց 20 հիտլերականի: Թերթը ամբողջ ֆրոնտով մեկ փառաբանեց հերոսի սխրագործությունը: Իսրայելյանը ամբողջ կարմիր Բանակում առաջինը արժանացավ «Փառքի» շքանշանին: Այդ լուրը արագ կերպով տարածվեց բոլոր ռազմաճակատներում:

Հայ գինվորական մամուլի լավագույն, հերոսական էջերից են «Սովետական» ռազմիկ թերթի համարները: «Սովետական ռազմիկ»-ը հանդիսանում էր երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի «Советский Восток» թերթի հայկական ճյուղը, որը լույս էր տեսնում սովետական ութ ժողովուրդների լեզուներով հրատարակվող թերթերին գուզահեռ: «Սովետական ռազմիկ» թերթը հիմնվեց 1943 թ. հուլիսի 23-ի պատմական օրը. այդ օրը կարմիր Բանակը լիկվիդացրեց գերմանացիների հուլիսյան խոշոր հարձակումը և սովետական զորքերը անյան հարձակման, որը շարունակվեց մինչև թշնամու լիակատար ջախջախումն ու ծունկի գալը: Թերթը խմբագրում էր մայոր Իսախանյանը:

Թերթի գործունեության առաջին շրջանը Դեպի անցման պատմական օրերն էին: Թերթի մի համարի էջում տպված է Աջափնյա Ուկրաինայի քարտեզը. քարտեզի կողքից տպված է առաջնորդի պորտրեն, որը մատնացույց է անում կիևը, Ժիտոմիրո, Սդեսան և ամբողջ Աջափնյա Ուկրաինան: «Վոլպայի և Դոնի լեզվով խոսում է Դեպի»- մեծ տառերով գրում էր թերթը առաջին էջի ճակատին: Դեպի անցման ժամանակ հայ

ժողովրդի բազմաթիվ զավակներ կատարեցին անօրինակ հերոսություններ և նրանցից շատերն արժանացան Սովետական Միության Հերոսի կոչման: «Գնեպրը բոցերի մեջ է» — դրում է թերթը: Այդ կրակը ամենաակտիվ կերպով բորբոքում և ծավալում էին նաև Հայաստանի զավակները: Թերթի նյութերը արտացոլում էին հայ գինվորների մզած կոիճների հերոսական էպիզոդներն Ուկրաինայի աղատագրման մարտերում:

«Սովետական օազմիկ» թերթի գործունեության երկրորդ շրջանում խմբագիր նշանակվեց մայոր Վ. Ղազանջյանը:

Թերթը աշխատում էր հայ մարտիկների մեջ, նրանց սախապատրաստում էր եղբայրական Մուղավիայի աղատագրման համար մղվող մարտերին: Խմբագրության աշխատողներն իրենց նյութերի մեջ պատկերել են Յասի-Քիշնեյան պատմական կոիճներին մասնակցող հայ գինվորների հերոսության շատ օրինակներ: Երբ կարմիր բանակը դուրս եկավ սովետական պետական սահմանը և մտավ Բալկանյան երկիրները, «Սովետական օազմիկ»-ը հայ մարտիկներին դաստիարակում էր այն ոգով, որ նրանք բարձր պահեն գինվոր-հաղթողի և աղատարարի մեծ պատիվը: Թերթը դրում է.

«Հայ խիզախներ, հաղթողի քայլով անցեք ռուսական հողով, Բուլղարիայով դեպի վերջնական հաղթանակ: Հետագա համարները հագեցված են այնպիսի նյութերով, որոնց մեջ նկարագրված են հայ գինվորների մեծագործությունները Բուխարեստում, Սոֆիայում, Կոնստանցայում, Բելգրադում, Բուդապեշտում, Վիեննայում: Հինգ պետությունների սահման կրտեց և անցավ «Սովետական օազմիկ» թերթը: Խմբագրական կուլեկտիվը սերտ կապ էր պահպանում զորամասերի հետ և մոտիկից ճանաչում էր ամենաաչքի ընկնող հերոսներին: Թերթի մի համարի ճակատին մեծ տառերով գրված է սովետական աղատարար գինվորի լողունը:

«Մենք գնում ենք մարդկությունը ֆաշիստական բարբարոսներից աղատագրելու պայքարի ավանգարդում: Մենք փրկում ենք աշխարհի քաղաքակրթությունը»:

«Սովետական օազմիկ» թերթը հանդիսանում էր կարմիր Բանակի աղատագրական մեծ միսիայի իսկական դրոշակակիրը:

Հայ գինվորական մամուլի մյուս, ոչ պակաս կարևոր օրգաններն էին «Կարմիր Բանակի Ազիտատորի Բյուլետոնը», «Մարտական կադրեր», «Մարտական աստղ» և «Մարտ հանուն հայրենիքի» թերթերը, որոնք հրատարակվում էին Հայրենական պատերազմի տարիներին տարբեր ժամանակներում:

«Կարմիր Բանակի Ազիտատորի Բյուլետոն»-ը հանդիսանում էր այդ «Բյուլետոն»-ի ռուսական հրատարակության հայկական ճյուղը: «Բյուլետոն»-ը հրատարակվում էր Մոսկվայում, կարմիր Բանակի Գլխավոր Քաղվարչության կողմից: Նրա հայկական ճյուղը խմբագրում էր մայոր Հմայակ Ոսկանյանը (Սիրասը): «Բյուլետոն»-ն ուներ նաև այլ հրատարակություններ — թոուցիկներ, կոչեր, լողուններ, նամակներ, պլակատներ և այլն:

«Բյուլետոն»-ը և նրա հրատարակած նյութերը տարածվում էին բոլոր ռազմաճակատներում, հայ քաղաքաշխատողների, հրամանատարների և գինվորների համար ծառայում էին որպես նյութ քաղաքական-դաստիարակչական աշխատանքներ ձավալելու գործում: «Բյուլետոն»-ում տպված է բանակի գեներալ Բաղրամյանի հողվածը սովետական դվարդիայի մարտական գործերի

հարուստ փորձը կիրառելու մասին: Այդ հողվածի մեջ բանակի գեներալը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես հայ, ռուս, ուկրաինացի, բելոռուս և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ հանդիսացող զվարդիականները կոփվեցին թշնամու դեմ մղվող կռիվներում, ինչպիսի շեշտակի հարվածներով ջախջախում էին թշնամուն և ինչպես այդ զվարդիականների փորձը պետք է օրինակ դառնար սովետական բոլոր զինվորների համար:

«Բլոկնուտ»-ի մեկ ուրիշ համարում տպագրվել է ՀԿՐԳ կենտկոմի քարտուղար ընկեր Գր. Հարությունյանի նշանավոր հողվածը «Հայ ժողովրդի նվաճումները և հայ մարտիկների անելիքները» վերնագրով: Այդ հողվածում հանրադրումարի են բերված հայ ժողովրդի պայքարն իր աղղային և պետական անկախության համար, նրա նվաճումները սոցիալիզմի կառուցման գործում և հայ ռազմիկների հերոսական կռիվները մեր հայրենիքի պաշտպանության ճակատում: Այդ երկու հողվածներն էլ դրված էին հատկապես «Բլոկնուտ»-ի համար, սակայն նրա էջերից տարածվեցին ռազմաճակատի բոլոր հատվածներում և հրապարակվեցին նաև ուրիշ թերթերում:

Բազմակողմանի և բազմաբովանդակ են «Բլոկնուտ»-ի նաև մյուս նյութերը:

«Մարտակամ կադրեր» թերթը (խմբագիր մայոր Ասրյան) 1943 թվականի վաղ գարնանից հրատարակվելով, եռանդուն աշխատանք էր ծավալում մի պահեստային գործառնում, ռազմաճակատին վարժված և լավ պատրաստված ռեզերվներ տալու համար: Այդ թերթի աշխատողները երթային վաշտերի հետ մեկնում էին մինչև ռազմաճակատները և վերադառնալով իրենց խմբագրութունը, թերթի էջերում պատմում էին գործասի դաստիարակած ռազմիկների մարտական գործողութունների մասին: Թերթը ճակատային ընկերների օրինակով սովորեցնում էր և ուսուցման մեջ դանձուկներին:

«Մարտակամ աստղ» թերթը հանդիսանում էր բանակային «Боевая 38E30A» սուսական թիթի հայկական ճյուղը: Այդ թերթը սկզբնական շրջանում խմբագրում էր կապիտան Գ. Հովհաննիսյանը, իսկ հետագայում՝ կապիտան Ս. Արեղյանը: Խմբագրութունը լայն կազմակերպչական և պրոպագանդիստական աշխատանք էր կատարում ռեզերվային և սահմանապահ գործասների մեջ, նրանց մարտական ուսուցման և հրամանատարության առաջադրանքները կատարելու ուղղությամբ: Թերթը իր էջերում լայնորեն լուսարանում էր ռազմաճակատում մանր ստորաբաժանումների փորձը և այդ օրինակներով սովորեցնում ընթերցողներին:

«Մարտ համուսն հայրենիք» թերթը հանդիսանում էր հայկական պահեստային գործասներից մեկի հրամանատարության օրգանը, որը հրատարակվում էր 1943—1945 թ. թ.: Այդ թերթի առաջին խմբագիրն էր կապիտան Դ. Հովհաննիսյանը, իսկ նրան փոխարինեց կապիտան Ի. Կարապետյանը, վերջինիս էլ ավագ լեյտենանտ Ս. Գրիգորյանը: Խմբագրության համառ աշխատանքի շնորհիվ թերթը կառուցվում էր կարմիրբանակայինների գրած հողվածներից, որոնք մշակվում էին աշխատակիցների կողմից: Թերթի էջերում լայն տեղ էր արվում նաև գրական-գեղարվեստական նյութերին, որոնց միջոցով մարտիկների մեջ դաստիարակվում էր բարձր կուլտուրա:

Մենք միայն ընդհանուր գծերով շարադրեցինք Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված Հայ գինվորական թերթերի գործունեության լուրջ մի քանի կողմերը: Այդ թերթերից յուրաքանչյուրն ունի իր սկիզբն ու վերջը, իր հարուստ բովանդակությունը, խմբագրության այստանքի հետաքրքիր փորձը՝ թերթի գործունեության առանձնահատկություններին և ճակատային պայմաններին համապատասխան:

Հայ գինվորական թերթերի այն սակավաթիվ օրինակները, որ պահպանվել են, բացառիկ պատմական արժեք ունեցող ունիկումսիս են, որոնք քանի հնանում, ավելի կարևոր ու հետաքրքիր են դառնում: Այդ թերթերից յուրաքանչյուրն իր լուսաբանած բազմազան հարցերով՝ առանձին ուսումնասիրության թեմա է, հետաքրքիր, կարևոր թեմա, որը պատկերում է մեր ժողովրդի պատմության փառավոր էջերը: